ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

20.05. 2017թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսեր կատարելու նպատակով Կենտրոնական բանկում բացել են նախընտրական հիմնադրամներ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կենտրոնական բանկից 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ վերահսկիչ – վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում մուտքերի և ելքերի վերաբերյալ, որոնց հիման վրա վերահսկիչ – վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկանքներն իրենց մեջ ներառել են

տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ծախսերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամներում մնացորդների վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքը նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը, 20-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներակայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերն իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, ընտրական օրենգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի, ինչպես նաև հիմնադրամի միջոցներից վճարված, սակայն հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունն իրականացրել է՝

-Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքների

-Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված հայտարարագրերի

-Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի

- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

ՈՒսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նախընտրական հիմնադրամներում առկա է ընտրական օրենգրքով սահմանված սուբյեկտների կողմից նախընտրական հիմնադրամում մուծված գումարի առավելագույն չափի գերազանցում: Մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամի հաշվին ֆիզիկական անձանց՝Արամ Մելքումյանի կողմից մուծվել է 130.000 դրամ, Արտուշ Թամրազյանի կողմից 200 000դրամ, ինչպես նաև Երևանի ավագանու անդամի թեկնածու Հակոբ Գրիգորի Խաչատրյանի կողմից մուծվել է 1 050 000դրամ:

Ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մուծում կատարել մինչև նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով գումար (այսինքն՝100 000) դրամ, իսկ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուն՝ նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով գումար (այսինքն՝ 1 000 000)դրամ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նախընտրական հիմնադրամ մուծված առավելագույն չափերը գերազանցող գումարները, համապատասխանաբար՝ 30.000 դրամը, 100 000դրամը և 50 000 դրամը փոխանցվել են պետական բյուջե:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվել են քվեարկության օրվանից:

Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից ներկայացված դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից 17.05.2017թ.-ին մարվել է 900 000 դրամի պարտավորություն.

Նախընտրական քարոզչության և դրանից հետո ընկած ժամանակահատվածում նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող դիմում – բողոքներ չեն ստացվել:

Համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքնի կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը *փաստում է*, որ.

Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ՝ Տ.Բաբիկյան